րէր զնա Ղայմազ Խանն և ունկն դնէր նմա, և լսէր զբանս նորա։ Այս խոսրով ծանոյց նմա վասն կաթուղիկոսին. և առեալ տարաւ առ նա, և ծանօթացոյց նմա։ Եւ գանգատեաց նմա զամենայն ինչ, և ծանոյց որ ինչ ի բնէ լեալ էր։ Այլեւ եցոյց զթուղթն Մահմատ Թագաւորին, որ տուալ էր Փիլիպպոս կաթուղիկոսին։ Եւ իմացեալ ծանեաւ զամենայն Ղայմազ Խանն, և ասաց ցնոտարն իւր, զոր ինչ ասիցէ քեզ Բարդ, դու գրեա աղերսագիր. յայս ինչ աւուր երթայ Թագաւորն ի մէջ Ջամին աղօթք ի կէս աւուրն. և դու առ զամենայն միաբանս քո իւրեանց հանդերձիւն և խաթիշարիֆն, և գնացեալ ի գլուխ պողոտային՝ յորժամ գայ Թագաւորն և տեսանէ զքեզ. և թէ վասն ձեր հարցանէ մեզ, մեք ասամք նմա պատասխանի։ Եւ թէ ոչ հարցանէ, դուք առ տակաւ մերձ եկայք, և ասացէք. «բարերախտ Արքայ, քաղցրացո՛ զչնորհսդ իմում խնդրագրի»։ Եւ յայնժամ զոր ինչ Աստուած կամեսցի՝ այն լիցի։ Զայս ասաց Ղայմազ Խանն, և հրամայեաց գնալ ի տեղի իւր, և պատրաստ լինել զոր ինչ պատուիրեսցի առնել մեծաւ զգուշութեամբ։ Եւ ի պայմանեալ աւուր Ուրբաթու կէս աւուրն գնացին ի գլուխ բուն պողոտային... և կանգնեցան միաբանութեամբ։ Եւ ահա ելեալ Թագաւորն բազմութեամբ երթայր, և եմուտ ի պողոտայն, և հայեցեալ տեսանէ զսեաւ ժողովն,